Դաս 45. Ինչպես է ձևավորվում հասարակությունը

Մտքեր հասարակության մասին

Մարդը ստեղծված է հասարակության համար: Նա ընդունակ չէ և քաջություն չունի միայնակ ապրելու:

Ու. Բլեքսթոուն

Մարդը ծնված է հասարակության համար:

Դ. Դիդրո

Եթե քեզ մարդիկ խանգարում են, ապա քո ապրելը անիմաստ է: Մարդկանցից հեռանալը ինքնասպանություն է:

Լ. Տոլստոյ

Մարդը առանձին թույլ է, ինչպես լքված Ռոբինզոնը: Միայն այլ մարդկանց հետ միասին նա կարող շատ բան անել:

Ա. Շոպենհաուեր

Նրանք, ովքեր մտածում են, որ կարող են ապրել առանց մարդկանց, սխալվում են: Բայց նա, ով մտածում է, որ մարդիկ չեն կարող ապրել առանց իրենց, սխալվում է կրկնակի:

Ֆ.Լառոշֆուկո